

Վանգուվրի մէջ 62 հազար տղար հանգանակուեցաւ ի նպաստ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի աշխատանքներուն



Կարդալ էջ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մի՛շտ հաւատարիմ հողին եւ ժողովուրդին

«Հաւատարիմ հողին ու հայուն» կարգախօսով Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը մասնակցի Հայաստանի Ազգային ժողովի արտակարգ ընտրութիւններուն: Իր էութեամբ հանդիսացող վերոնշեալ կարգախօսին հաւատարիմ՝ ՀՅԴ-ն 128 տարուան իր ազգային առաքելութեան ընթացքին ջանք չէ խնայած գոյափոխելու հայ ժողովուրդի կենսաերթը՝ պատմական ամենէն ճգնաժամային հանգրուաններուն ընթացքին:

ՀՅԴ այս ընտրութիւններուն կը մասնակցի իբրեւ ինքնուրոյն քաղաքական օրակարգ ունեցող կուսակցութիւն եւ ինչպէս անցեալին՝ այսօր նոյնպէս պետականամէտ իր ուղղութեամբ կը նպատակադրէ՝ Նոր Հայաստանի հիմքերու ամրապնդումը:

Յստակ է, որ ընկերվարական գաղափարախօսութիւն դաւանող կուսակցութեան համար, առաջնահերթ հիմնախնդիրներէն է բարձրացնել քաղաքացիներու կենսամակարդակը, պայքարիլ աղքատութեան դէմ եւ կարելի բոլոր միջոցներով արգելակել համատարած արտագաղթը: Աւելի՛ն, կուսակցութիւնը նախընտրական իր ծրագրով հետամուտ է ժողովրդավարութեան եւ իրաւական պետութեան նուիրագործման, ինչպէս նաեւ ընկերային արդարութեան հաստատման:

ՀՅԴ յանձնառու է նաեւ ստեղծելու հայրենի հողին վրայ համագոյակից քաղաքացիներու համերաշխ հասարակութիւն, որ ազատութիւնը պիտի ունենայ բազմակարծութիւն եւ աշխարհայնութիւն արտայայտելու, ինչպէս նաեւ խօսքի, խղճի եւ մամուլի լիակատար ազատութեամբ օժտուելու իրաւունքը պիտի ունենայ:

Դաշնակցութիւնը կը հաւատայ, որ հայրենիքին մէջ ընկերային խորացող խնդիրներու եւ դժուարութիւններու առաջը կարելի է առնել տնտեսական զարգաց-

Խմբագրական... շար. էջ 9

ՀՅԴ Արցախի Կեդրոնական Կոմիտէն

կը դատապարտէ Արցախեան ազատամարտը արժեզրկելու ճիգերը

ՀՅԴ Արցախի Կեդրոնական Կոմիտէն, նոյեմբեր 30 թուակիր յայտարարութեամբ մը կը դատապարտէ Հայաստանի մէջ Ազգային ժողովի ընտրապայքարի ծիրէն ներս Արցախեան Ազատամարտը արժեզրկելու ճիգերը: Ստորեւ յայտարարութիւնը:

Սրբելի՛ հայրենակիցներ,

ՀՀ-ում Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւնների քաղաքաշաւի այս օրերին, ականատեսն ենք որոշ թեկնածուների, քաղաքական ուժերի կողմից Արցախին լեզուակռուի մէջ ներքաշելու, Արցախեան շարժումն ու ազատամարտը արժեզրկելու ճիգերին: Սա կատարուում է նախորդող ամիսներին, որոշ շրջանակների կողմից ազգային արժէքներ, մասնաւորապէս Հայ առաքելական եկեղեցին եւ աւանդական հայկական ընտանիքը թիրախաւորելու խորապատկերին: Թւում է, թէ այս բոլորը մաս են կազմում մի ընդհանուր քաղաքականութեան, որի նպատակն է հարուածել մեր ազգային արժէքներին:

Արցախեան շարժումը եւ ազատամարտի յաղթական ընթացքը հանդիսանում են հայոց պետականութեան հիմնաքարերը, վերջին երեսուն տարիների հայութեան ազգային ձեռքբերումների մեկնակէտն ու արդիւնքը, մեր ներկայի հնարաւորութիւնների ու ապագայի նոր ձեռքբերումների երաշխաւորները: Այդ ամէնը ձեռք է բերուել հազարաւոր մարդկանց արեան ու գրկանքների գնով: Վտանգել, հարցականի տակ դնել այդ ամէնը նշանակում է հրաժարուել բազում սերունդների ազգային պետու-

Արցախ... Ծար. էջ 10

ՀՅԴ Արցախի Կեդրոնական Կոմիտէ
30 նոյեմբերի 2018թ.



HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA



MARCHÉ
ADONIS



**FAITES APPEL À NOTRE SERVICE TRAITEUR
POUR VOS OCCASIONS FESTIVES**



**JOYEUX
TEMPS DES FÊTES !**

HAPPY HOLIDAYS

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /   

Հրանդ Մարգարեան. «Իշխանութիւնը Կ’ուզէ, Որ Ընդդիմութիւնը Խոցելի Ըլլայ»

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան քարոզչութեան ընթացքին հանդիպումներ ունեցած է հայ-րեմիքի մէջ հաստատուած սուրիահայերու եւ իրանահայերու հետ։

30 նոյեմբերի ուշ երեկոյեան իրանահայերու հետ հանդիպումի մը ընթացքին ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան վերլուծած է աւագանիի ընտրութիւններէն սկսեալ քարոզարշաւներու ընթացքին տեղի ունեցած իրադարձութիւններն ու յայտնած որոշ մտահոգութիւններ։

Ստորեւ կը ներկայացնեմ Հրանդ Մարգարեանի ելոյթը։

Օր օրի տեսանք, որ արհեստականօրէն սրւում է վիճակը, եւ արհեստական փորձ է արւում բեւեռներ ձեւաւորել։ Իշխանութիւնը, այս պարագայում Նիկոլ Փաշինեանը, չի կարողանում բաւարարուել իր մեծ յաղթանակով եւ արդէն ուղուձ է որոշել, թէ ով պէտք է լինի իր ընդդիմութիւնը։ Եւ, սրելով իրավիճակը, սեւ ու սպիտակի, սպիտակ ու սեւի, անցեալի ու ներկայի կտրուածքների մէջ փորձում է ձեւաւորել իր ընդդիմութիւնը։ Եւ, բնական է, մտածում է, որ այդ ընդդիմութիւնը պէտք է խոցելի ընդդիմութիւն լինի, այդ ընդդիմութիւնը պէտք է ժողովրդի համակրանքը մեծ հաշուով չվաճելի, այդ ընդդիմութիւնը պէտք է անցեալի սխալների բեռը կրի։ Սա պէտք է իրեն, որպէսզի ստուերում թողնի խելացի, մտածող, ծրագիր ունեցող, լուրջ, առողջ քաղաքական ուժերին։

Անցեալի էջը փակուած է։ Անցեալը այլեւս կարելիութիւն չունի վերադարձի։ Մեր ժողովուրդը իր շարժումով այնպիսի ալիք բարձրացրեց, որ սրբեց, մաքրեց մեզ անցեալի սխալներից, անցեալի տհաճ, տգեղ երեւոյթներից։ Բայց անընդհատ վախնալ, որ անցեալը կը ձգտի վերադառնալ, որ այն ձգտում է փոխվրէժի՝ իմ կարծիքով արհեստական մտահոգութիւն է՝ այլ նպատակներ հետապնդող։ Անցեալը անընդհատ յիշատակելով, անցեալի սխալները անընդհատ յիշելով՝ փորձ է արւում առիթը օգտագործել՝ մեր իրականութեան որոշ արժէքներ, ոմանք գուցէ ասեն՝ կարծրատիպեր, ջարդելու համար։ Այդպէս է թւում ինձ։ Գուցէ սխալում եմ։ Աստուած տայ՝ ես սխալուեմ, բայց այդպէս է թւում։ Ասում են բանակի մէջ թալան կայ, բայց այնպէս են ասում, որ չի յստակեցւում, թէ ովքեր են թալան անողները, քանի՞ հօգի են, քանի՞ ընկերութիւն է, դա ի՞նչ մաֆիա է։ Փորձ է արւում բանակը ցոյց տալ իբրեւ հիւանդ մարմին մեր պետականութեան մէջ, փորձ է արւում ցոյց տալ, որ բանակի մէջ թալանչիներ կան միայն։ Սպայական կազմի ազնիւ, պարկեշտ, հայրենասէր մարդկանց մասին խօսք չկայ այսօր։ Խօսք կայ միայն թալանչիների մասին։ Եւ ոչ թէ թալանչին է միայն, որ մեղադրւում է, այլ բանակն է վարկաբեկւում։

Նիկոլ Փաշինեանի կողքին մէկը կանգնած, չգիտեմ ինչո՞ւ, չգիտեմ ո՞ր անհրաժեշտութիւնից բխած, ո՞ր անհրաժեշտութիւնից մեկնած, փորձ է անում ապրիւեան ժողովրդական շարժումը համատեղ Արցախի ազատամարտի հետ։ Իմ կարծիքով՝ ապրիւեան ժողովրդական շարժումը հոյակապ էր։ Բայց ի՞նչ պէտք կայ համեմատել։ Ամէն բան արժէք է ինքն իր մէջ, ինքն իր ժամանակի համար, ինքն իր իմաստով։ Երբ համեմատութիւն ես կատարում՝ դու այլ նպատակ ես հետապնդում։ Սխալը՝ սխալ էր, գուցէ բերանից թռել էր այդ սխալը։ Բայց դա Նիկոլ Փաշինեանի ներկայութեամբ էր ասուել, եւ Նիկոլ Փաշինեանը չէր փորձել սրբագրել։ Եւ եղան անհատներ, նրանց մէջ նաեւ մեզնից ոմանք, որ արտայայտուեցին այդ մասին՝ նշելով, որ դա ճիշդ չէ, այդ համե-

մատութիւնը սխալ է։ Ոմանք նոյնիսկ վիրաւորուեցին։ Յաջորդ օրը Նիկոլն էլ ասաց, որ սխալ է արել։ Բայց դրանից յետոյ էլ ինքն է ասում՝ ով այդպէս է խօսում, ով Արցախի ազատամարտի մտահոգութեամբ է խօսում՝ նա էլ է թալանչի, նրան էլ պէտք է ասֆալտին ծեփել, պատեպատ խփել, չեմ իմանում, վզից բռնել, դուրս գցել էլի չհասկացանք, չհասկացանք՝ մենք այս ժողովրդական շարժումով ուզեցել ենք ժողովրդավարութի՞ւն կերտել, թէ՞ հակառակը՝ հակաժողովրդավարական վարչակարգ։

Ազգովի հպարտացանք, որ մեր վարչապետի տղան, Երեւանի ինչ որ դրասենեակի մէջ ծառայելու փոխարէն, գնացել է Ղարաբաղ, այնտեղ է փորձում ծառայել։ Բայց դա արդէն դառնում է տովժիկի պատմութիւնը, արդէն քանի անգամ է նա խօսել իր տղայի՝ Արցախում ծառայելու մասին։ Վերջին անգամ նա կրկին համեմատութիւն է կատարում՝ իմ տղան Ղարաբաղում է ծառայում, իսկ Ղարաբաղի իշխանութիւններից ոչ մէկի տղան Ղարաբաղում չի ծառայել։ Ինչը որ սուտ է։ Գիտեմ, գիտեմ որ եղել են իշխանութեան բարձր մակարդակի վրայ գտնուող անձինք, որոնք ամէն ճիգով փորձել են իրենց երեխաներին հեռու պահել բանկում ծառայելուց, բայց նաեւ եղել են մարդիկ, գուցէ մի փոքրամասնութիւն, չգիտեմ, որ ինչպէս Փաշինեանն է իր երեխային ուղարկել ծառայելու, իրենք էլ իրենց երեխաներին ուղարկել են, եւ նրանք ծառայել են։ Ինչո՞ւ ես դու դա համեմատում՝ Ղարաբաղի իշխանութիւնների ներկայացուցիչների երեխաները ծառայո՞ւ են, թէ՞ չեն ծառայել։ Բանից պարզուեց որ ծառայել են։ Սա լաւ տեղ չի տանում մեզ։ Այդ երեւոյթը, առանց զսպման մեքանիզմի, չգիտեմ՝ գիտակցուած, թէ ոչ, արդէն վերածուեց հակադարաբաղեան երեւոյթի։ Ես կարծում եմ, որ յարաբերութիւնների մակարդակն այնպիսին է, որ կարելի է հեռախօսային զրոյցով այդ թիւրիմացութիւնները վերացնել։ Մենք մեր ժողովրդից պէտք է խնայենք Ղարաբաղի հարցով տեսակէտների բեւեռացումը։ Դա մեզ լաւ տեղ չի տանում։ Դա ո՛չ մեզ է պէտք, ո՛չ Ղարաբաղին եւ ո՛չ էլ ոեւէ մէկին։ Մտահոգութիւնները մեծ են, վտանգը մեծ է։

Նիկոլ Փաշինեանը մի այնպիսի ալիքի վրայ է իշխանութեան եկել, որ իրեն թւում է, թէ ինչ ուզենայ, կարող է անել։ Դա գուցէ իրողութիւն է։ Բայց դա պէտք է անել ազգայինի ուղղութեամբ, արդարութեան ուղղութեամբ, ժողովրդավարութեան ուղղութեամբ, ապա թէ ոչ՝ ինքը շատ արագ կը մսխի այդ դրամազուխը։ Մենք շատ խուճուճ ճանապարհ ենք անցել, բայց այդ ամէնով հանդերձ՝ մենք ի վիճակի ենք բաց ճակատով կանգնել եւ ասել՝ մենք անփոխարինելի ուժ ենք Հայաստանում, հայկական իրականութեան մէջ։ Մենք ունենք 2 հիմնական օրակարգ, որով զանազանում ենք բոլորից եւ հէնց այդ պատճառով պէտք է ներկայութիւն ունենանք բոլորի կողքին։ Դա ազգային մեր էութիւնն է եւ ընկերային արդարութեան մեր հասկացողութիւնը։ Շատ ու շատ բառերի տակ թաքնուած վտանգներ կան։ Խօսում են Արցախի մասին՝ այո, Արցախի ճակատագիրը պէտք է որոշի Արցախի ժողովուրդը, Արցախի սահմանները պէտք է որոշի մեր ժողովուրդը... Այն քաղաքական ուժը, որ այսօրուանից չի ասում՝ ո՞ր սահմաններով Արցախի մասին է խօսում, այն քաղաքական ուժը, որ այսօր չի ասում, թէ ո՞ր Արցախն է ինքը գնում ժողովրդի դատին, եւ ո՞ր Արցախի հա-

մար պէտք է վաղը գնայ բանակցելու, հաստատ ինչ որ բան կեղծում է, ինչ որ բանի յետեւում թաքնւում է, թող դրա անունը լինի ժողովուրդ ասուածը։

Ինչպէ՞ս կարող է քաղաքական ուժը տեսակէտ չունենալ։ Մի՞թէ կարող է քաղաքական ուժը տեսակէտ չունեննալ։ Հնարաւոր է՝ քաղաքական ուժի տեսակէտը ժողովուրդը չհաստատի, դա կարող եմ հասկանալ։ Մի իմաստուն ասել է՝ խաղաղութեան ժամանակ պատերազմի քարոզչութիւնն է ոճրագործութիւն եւ յանցանք, իսկ պատերազմի ժամանակ խաղաղութեան քարոզչութիւնը։ Մենք կուուի մէջ ենք եւ պէտք է կուուենք։ Երբ դեռ չկայ այն հաւանականութիւնը, որ տեսնենք խաղաղութեան ափը, մենք պարտաւոր ենք մեր ժողովրդին պահել կազմակերպուած եւ մարտունակ։ Պարտաւոր ենք դա անել։ Կազմակերպուած հասարակութիւն ունենանք, հայկականութիւն ունենանք, որ ինչպէս ապրիլին, երբ Ազրպէյճանը յարձակուեց, բոլորը մէկ մարդու պէս ուղարկուեն դէպի սահման։ Մենք այդպիսի հասարակութեան պէտք ունենք։

Արդարութիւնն էլ մեզ համար է։ Դա հէնց այնպէս ասուող խօսք չէ։ Մենք արդարութեան ջատագով կուսակցութիւն ենք եւ ասում ենք՝ որպէսզի արդար հասարակութիւն ունենանք, ընկերային արդարութիւն է պէտք։ Եւ,

որպէսզի ընկերային արդարութիւն ունենանք, պետութիւնը պէտք է միջամտի տնտեսութեան զարգացմանը։ Ձի կարող պետութիւնը դիտորդ լինել, չի կարելի ամէն ինչ վստահել շուկային։ Մեր ազգային էութիւնից է բխում մեր ընկերվարական բնոյթը։ Մենք ասում ենք՝ մեր այս պայքարի մէջ մեր ժողովուրդը պէտք է համախմբուած լինի մեր շուրջ։ Եւ, որպէսզի ժողովուրդը համախմբուած լինի մեր շուրջ, նա պէտք է ապրի արդարութեան պայմանների մէջ։ Մեր ժողովուրդը պէտք է արժանապատիւ ժողովուրդ լինի, որ կարողանայ պայքարել, հպարտ ժողովուրդ լինի, որ կարողանայ պայքարել, ինքնաբաւ ժողովուրդ պէտք է լինի, ձեռքը հասնի բերանին, որ կարողանայ պայքարել, սոված պէտք չէ լինի։ Մենք ասում ենք ամէն մի զօրացրուած երիտասարդ պէտք է զգայ պետութեան գուրգուրանքը, ունենայ բնակարան, ունենայ աշխատանք, որ մնայ այս երկրում, ընտանիք կազմի, որ չմտածի արտագաղթելու մասին, որ չարտագաղթի։

Արտագաղթի դէմն այդպէս կարելի է առնել։ Տարին 20 հազար երիտասարդ է աւարտում իր գինուորական ծառայութիւնը։ Մենք ազգովի պարտաւոր ենք այդ 20 հազարին աշխատանքով ապահովել, բնակարանով ապահովել, որպէսզի նա կապուի այս հողին, կանի այս հողին, չարտագաղթի»։

Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը HITUNES.CA	Ունկնդրեցէք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հիւնգաքթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահկան հարցագրոյցներ TRIKTRAK.CA
--	---

«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԵՐԴՅԱՆ ԸՆԴԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» “ARAM AND SETA SEMERDJIAN FAMILY FOUNDATION”	
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ	
«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԵՐԴՅԱՆ ԸՆԴԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի տնօրէնութիւնը կը տեղեկացնէ, թէ 2017-2018 ուսումնական տարեշրջանին՝ Քեպէք նահանգէն ներս հովանաւորած եւ կրթաթոշակ յատկացուցած է տասներկու (12) արժանաւոր ուսանողներու։	
Այժմ՝ չորրորդ անգամ ըլլալով, «ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԵՐԴՅԱՆ ԸՆԴԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի տնօրէնութիւնը կը յայտարարէ, թէ արդէն կ'ընդունի արժանաւոր թեկնածուներու դիմումնազրեր 2018-2019 ուսումնական տարեշրջանին համար։	
«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԵՐԴՅԱՆ ԸՆԴԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի տնօրէնութիւնը՝ կրթաթոշակ պիտի յատկացնէ այն ուսանող(ուհի)ներուն, որոնք Քեպէք նահանգի համալսարաններէն մէկուն մէջ կը հետեւին արդէն Առողջապահական կամ Մաքուր եւ Կիրառական Գիտութեանց ճիւղերուն՝ (Specifically be pursuing their education in the fields of <u>Health Sciences</u> or <u>Pure and Applied Sciences</u>).	
Դիմումնազրեր ստանալու համար կապուիլ հիմնադրամի ել-նամակի հասցէին՝ semerdjianfund@gmail.com ԴԻՄՈՒՄՆԱԳՐԻ ՅԱՆՁՆՈՒՄԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԺԱՄԿԷՏ 28 ՓԵՏՐՈՒԱՐ 2019 2018-12-01	

Վանգուվրի մէջ 62 հազար տղար հանգանակուեցաւ ի նպաստ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի աշխատանքներուն

Շաբաթ, 24 Նոյեմբերին, Վան-գուվրի գաղութը, Արեւմտեան Գանատայի Հայ Դատի յանձնախումբին նախաձեռնութեամբ մասնակցեցաւ աննախընթաց նուիրահաւաքի՝ ի նպաստ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի աշխատանքներուն:

Հանդիսութեան ներկայ էին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Հայր Գարեգին Վարդապետ Շիրազեան, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ եւ Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ ընկեր Յակոբ Տէր Սաչաւորեան, Գանատայի Կեդրոնական կոմիտէի անդամ ընկեր Վահէ Անտոնեան, Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի Ուաշինկթընի գրասենեակի հաղորդակցութեանց վարիչ Էլիզապէթ Չուլճեան եւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակի գործավար ընկեր Սեւակ Պելեան:

Նուիրահաւաքին ներկայ էին նաեւ հայ ժողովուրդի արդար դատին հաւատացող գանատացի քաղաքական գէմքեր: Յատկանշական էր ներկայութիւնը Գանատայի խորհրդարանի անդամ Joe Peschisolido-ի եւ ընդհանուր գրասենեակի անդամներուն:

Երեկոյն սկսաւ ժամը 8-ին, Վան-գուվրի Հայ Կեդրոնի «Լազարեան» սրահին մէջ: Օրուան հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց Հայ Դատի յանձնախումբի անդամ ընկերուհի Բալիկ Քէօքէրեանը:

Ձեռնարկը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Գանատայի քայլերդներով, ապա հանդիսավարուհին բարի գալուստի իր խօսքէն ետք ներկայացուց օրուան յայտագիրը:

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակի գործավար ընկ. Սեւակ Պելեան ներկայացուց օրուան բանախօս ընկեր Յակոբ Տէր Սաչաւորեանի կենսագրական գիծերը եւ բեմ հրաւիրեց զայն: Ան ներկայա-

ցուց Հայ Դատի աշխատանքներու աշխարհաքաղաքական ընդհանուր ծիրը: Ան իր պատգամին մէջ ըսաւ. «Մենք 5 կեդրոնական գրասենեակներ ունինք, որոնք տարածուած են աշխարհով մէկ. ամենահինը Ուաշինկթընի գրասենեակն է, ունինք նաեւ գրասենեակներ Պրիւքսէլի, Հայաստանի, Լիբանանի եւ Մոսկովայի մէջ: Անոնք յատուկ աշխատանքներ կը տանին Հայաստանի կառավարութեան հետ՝ առաջին հերթին Արցախի անկախութեան ճանաչման ուղղութեամբ: Բացի անկէ կ'աշխատինք նաեւ Հայաստանի օժանդակութեան ի նպաստ՝ խօսքը ոչ միայն նիւթականի մասին է, այլ նաեւ, օրինակ, լուպիինկի, եւ այդ ուղղութեամբ բաւական յաջողած ենք: ԱՄՆ-ի շարք մը նահանգներ արդէն իսկ սկսած են ճանչնալու Արցախի անկախութիւնը»:

Տէր Սաչաւորեան շեշտեց նաեւ, որ Գանատայի մէջ Հայ Դատը ազդեցիկ կառոյց կը համարուի, իրենց ձայնը լսելի է նոյնիսկ հայ համայնքի շրջանակներէն դուրս:

Հանդէս եկաւ Գանատայի խորհրդարանի անդամ Joe Peschisolido, որ իր խօսքերուն մէջ շեշտեց, թէ ինքզինք կը համարէ Վանգուվրի հայ գաղութի բարեկամ եւ պատիւ ունի բաժնելու սոյն անգուգական երեկոյն հայ համայնքին հետ:

Ընկեր Պելեան խօսեցաւ Գանատայի մէջ կատարուող աշխատանքներուն մասին: Ան անդրադարձաւ Հայ Դատի տարած հսկայական աշխատանքներուն, որոնք ստարեցին Գանատայի վարչապետ Ճասթին Թրիւտոյի պատմական այցելութեան դէպք մայր Հայաստան, ինչպէս նաեւ անդրադարձաւ Արցախ-Ատրպէյճան հարցին: Ան ըսաւ. «Մեզի գործնական քայլեր պէտք են՝ յայտարարութիւնները կեանքի կոչելու համար, զանոնք աշխատանքային ծրագիրը վերածելու համար: Բնականաբար, այդ ուղղութեամբ կան լուրջ մարտահրաւէրներ,

եւ զանոնք յաղթահարելու համար Հայ Դատի յանձնախումբերը կ'աշխատին անխոնջ ջանքերով»:

Խօսք առաւ Արեւմտեան Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ ընկեր Յակոբ Տէր Յակոբեանը, որ անդրադարձաւ Արեւմտեան Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ընկերներուն տարած հսկայական եւ անսակարկ աշխատանքներուն, ապա իր երախտագիտական զգացումները յայտնեց Վանգուվրի հայութեան, որ իբրեւ գաղութ միշտ կը զօրակցի Հայ Դատին:

Արեւմտեան Գանատայի Հայ Դատի յանձնախումբին անունով ընկեր Տէր Յակոբեան «Honorary Armenian»-ի տիտղոսը յանձնեց Mountain View-ի պատասխանատու Glen Hodges-ի, որ մեծ ներդրում ունեցած էր Վանգուվրի Ապրիլեան յուշարձանի իրագործման եւ այդ շրջանին մէջ տեղադրման ի խնդր: Իսկ «Life Time Achievement»-ի տիտղոսին արժանացաւ գաղութիս երկարամեայ անդամ տիար Յակոբ Էլիքէնսէլը:

Հանդիսութեան գլխաւոր պատգամաբերն էր Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի Ուաշինկթընի գրասենեակի հաղորդակցութեանց վարիչ Էլիզապէթ Չուլճեան, որ ներկայացուց Ուաշինկթընի եւ ԱՄՆ-ի տարբեր տարածքներուն մէջ գործող Հայ Դատի յանձնախումբերուն գործունէութիւնը:

Գեղարուեստական բաժինով հանդէս եկան Մէտրըլէն հրաւիրուած ջութակահար Գայիանէ Գրիգորեան եւ կիթառիստ Մհեր Ապրամեան, որոնց մերթընդ մերթ կիթառի վրայ ընկերակցեցաւ նաեւ ընկեր Վահէ Յակոբեան: Անոնք հանդիսատեսը հմայեցին Կոմիտասի, Ազնաւուրի եւ Հայկերեսեանի բարձրորակ երաժշտութեամբ:

Սոյն նուիրահաւաքին հանգանակուեցաւ 62 հազար տղար՝ ի նպաստ Հայ Դատի գործունէութեանց:

Մեղրիկ Սիւլանեան Զափանեան

Կոչման արարողութիւն
Իվան Սրկ. Գեաղայեանի
քահանայական
ձեռնադրութեան



Դեկտեմբեր 1-ի երեկոյեան, Մոնթրէլի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Իվան Սրկ. Գեաղայեանի քահանայական ձեռնադրութեան կոչման արարողութիւնը, ձեռամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարսէն Արք. Չարեանի:

Կիրակմուտքի ժամերգութեան աւարտին, ընծայեալը, առաջնորդութեամբ խորտակակին՝ Արժանապատիւ Տ. Գառնիկ Ա. Քհն. Գոյունեանին, եկեղեցւոյ գաւիթէն մինչեւ դասը ծնրադիր մօտեցաւ Առաջնորդ Սրբազանին, հրաժարեցաւ բոլոր հերձուածողներէն, հերետիկոսներէն ու աղանդաւորներէն, խոստացաւ աշակերտիլ ու հետեւիլ Ուղղափառ եկեղեցւոյ հայրերու եւ հայրապետներու ուսուցումներուն, եւ ապա, ընթերցեց Հայ Առաքելական Ս. եկեղեցւոյ Հաւատոյ Հանգանակը:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանը յղեց իր պատգամը, բնաբան ունենալով Քրիստոսի այն խօսքը, որ կ'ըսէ. «Իմ լուծս քաղցր է, եւ բեռս՝ թեթեւ» (Մատթ. 11.30): Ան շեշտեց, որ եկեղեցականի առաքելութիւնը այնքան ալ դիւրին չէ, եթէ խորհուած չըլլայ հաւատքով ու կոչումի գիտակցութեամբ, ապա յորդորեց ընծայեալին՝ հաւատարիմ մնալ քրիստոնէական վարդապետութեան եւ եկեղեցւոյ սուրբ աւանդութիւններուն:

Կոչման արարողութեան ներկայ էին ձեռնադրութեան կնքահայր տիար Գրիգոր Տէր Ղազարեան, Ազգային Կեդրոնական վարչութեան, Ազգային վարչութեան, ազգային երեսփոխաններն ու ազգային պատգամաւորները, միութիւններու ներկայացուցիչներ, ընծայեալին ընտանիքը եւ հաւատացեալներ:

 Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com	 Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7 ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent	 VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	 Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel. (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 Services available in Armenian, Arabic, English and French	BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON  MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	 RE/MAX ՀԱՅԿ ԽԱՐԹՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	 NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Օթթաուայի մէջ ՀՄԸՄ-ի պատուիրակութիւնը այցելեց ՀՀ դեսպանատուն եւ Գանատայի խորհրդարանն Գնելով ՀՄԸՄ-ի 100-ամեակը



ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 100-ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս, Գանատայի Շրջանային վարչութեան նախաձեռնութեամբ, երկուշաբթի, 26 Նոյեմբեր 2018-ին ՀՄԸՄ-ի պատուիրակութիւն մը այցելեց Օթթաուայի մէջ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատուն: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր Գանատայի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տէր Բաբգէն Արք. Չարեան, իսկ անոր մաս կը կազմէին Ազգային վարչութեան անդամներ, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբայր Գառնիկ Մկրտիչեան, ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ քոյր Լիոնի Սարմազեան եւ վարչութեան անդամները, ինչպէս նաեւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ժիւրայր Զաքարեան: Հիւպատոսին հիւրըն-

կալութեամբ պաշտօնական խօսքերու փոխանցումէն ետք եղբայր Գառնիկ Մկրտիչեան ՀՄԸՄ-ի կողմէ յուշանուէր մը փոխանցեց մեծարգոյ հիւպատոս Արա Մկրտչեանին:

Նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 2:30-ին, Օթթաուայի խորհրդարանի շէնքին մէջ տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի 100-ամեակին նուիրուած պաշտօնական ընդունելութիւն, ներկայութեամբ խորհրդարանի անդամներ Bryan May-ի, Harold Albrecht-ի, Geng Tan-ի, Bob Saroya-ի, Faycal El-Khoury-ի, Ramesh Sangha-ի, Frank Baylis-ի, Jean Yip-ի օգնականին, վերոնշեալ պատուիրակութեան, ՀՄԸՄ-ի Գանատայի մասնաճիւղերու ներկայացուցիչներու, Օթթաուայի մէջ գործող քոյր միութիւններու ներկայացուցիչներու եւ հրաւիրեալներու:



Բացումը կատարեց Շրջ. Վարչութեան նախկին անդամ եղբ. Ժանօ Սարխանեան, որ բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն, ապա հրաւիրեց Գանատայի Շրջանային վարչութեան անդամ եղբ. Տանի Մարկորեանը՝ փոխանցելու Շրջանային վարչութեան խօսքը, որմէ ետք ցուցադրուեցաւ այս առթիւ պատրաստուած տեսերիկ մը:

Այնուհետեւ «Պանծալի» նուագախումբը հանդէս եկաւ յեղափոխական երգերու երաժշտութեամբ: Յետոյ բեմ հրաւիրուեցաւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ իր գոհունակութիւնը

յայտնեց Գանատայի շրջանին մէջ տարուած աշխատանքներուն առնչութեամբ եւ քաջալերեց, որ այս թափով շարունակուի երթը՝ հայ պատանիին ու երիտասարդին տալու հոգեմտաւոր սնունդ եւ ֆիզիքական առողջ դաստիարակութիւն:

Ընդունելութեան ընթացքին խօսք առին երեսփոխաններն ու Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսը, որոնք բոլորն ալ դրուատեցին ՀՄԸՄ-ը եւ քաջալերական խօսքերով հանդէս եկան:

Ծողիկ Ագաթիկեան

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանի ձեռամբ քահանայական ձեռնադրութիւն եւ օծում

Բարեշնորհ Իվան Սրկ. Գեաղայեան կոչուեցաւ Տ. Յակոբ Քահանայ

Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018-ին, Գանատայի Հայոց Թեմի հոգեւորականաց դասու փաղանգին միացաւ նուիրեալ նոր գինուոր մը, Թեմիս տարեգրութեանց մէջ արձանագրելով յիշատակելի ու հանգրուանային օր մը: Արդարեւ, Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագի ընթացքին քահանայ ձեռնադրեց եւ օծեց Բարեշնորհ Իվան Սրկ. Գեաղայեանը, որ վերանուանուեցաւ Արժանապատիւ Տ. Յակոբ Քահանայ:

Նորընծայ քահանային խարտաւիղակն էր Արժանապատիւ Տ. Գառնիկ Ա. Քհն. Գոյունեան, իսկ կնքահայրը՝ տիար Գրիգոր Տէր Ղազարեան:

Ս. Պատարագին ներկայ էին Ազգային Կեդրոնական վարչութեան, Ազգային վարչութեան, Ազգային երեսփոխանական ժողովի անդամներն ու պատգամաւորները, ինչպէս նաեւ գործակից միութիւններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալներու ստուար բազմութիւն մը:

Քահանայական ձեռնադրութեան ու օծման արարողութիւնը տեղի ունեցան Ս. Պատարագի ընթացքին, երբ ընծայեալը, խարտաւիղակ Քահանայ Հօր առաջնորդութեամբ խորան բարձրացաւ, եւ հաստատուելէ ետք թէ՛ ան արժանի է այս կոչումին՝ Առաջնորդ Սրբազանը քահանայութեան հրաւիրեց գինք:

Այնուհետեւ, «Աստուածային եւ

երկնաւոր շնորհ» շարականի երգեցողութեամբ ընծայեալը հրաժարեցաւ աշխարհիկ բոլոր կիրքերէն: Առաջնորդ Սրբազանը իր ձեռքը հանգչեցնելով ընծայեալի գլխուն, աղօթեց ըսելով. «Ես իմ ձեռքս կը դնեմ ասոր վրայ, եւ դուք բոլորդ աղօթեցէք, որպէսզի արժանի ըլլայ քահանայական աստիճանին», որմէ ետք ուրարը ընծայեալի պարանոցին վրայ գետեղեց, իբրեւ նշան Քրիստոսի քաղցր լուծին:

«Ողջոյն»էն առաջ, ընծայեալը ստացաւ քահանայական փիլոնը, սաղաւարտը, գօտին ու շուրջաւոր, ապա, «Խորհուրդ խորին» շարականի երգեցողութեամբ ան առաջին անգամ ըլլալով պատարագի զգեստով զգեստաւորուեցաւ: Առաջնորդ Սրբազանին շրթներէն հնչեց «Առաքելոյ Աղաւնոյ» շարականը, իսկ «Ամէն ալելուիա, ալելուիա» շարականէն ետք, Առաջնորդ Սրբազանը Ս. Միւռնոնով օծեց նորընծայ քահանային ճակատն ու երկու ձեռքերը, զայն վերանուանելով Տէր Յակոբ Քահանայ, ապա, զայն հրաւիրեց տալու առաջին օրհնութիւնը: Ձեռնադրիչ Սրբազանը վերջին աղօթքով, նորօծ Քահանային յանձնեց սկիզն ու մաղղման:

«Ողջոյն տուք միմեանց» շարականի ընթացքին, ձեռնադրիչ Առաջնորդ Սրբազանը եւ հոգեւորականները առաջին ողջոյնը ստացան նորած քահանայէն:

Արարողութեան աւարտին Առաջնորդ Սրբազանը իր պատգամին



մէջ հակիրճ կերպով բացատրեց արարողութեան ընթացքին բարձրացուած աղօթքներուն իմաստն ու նպատակը, նշելով որ օր մը առաջ կը զուգադիպէր Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալներուն տօնը, որոնք կը կոչուին Հայաստանի առաջին Լուսաւորիչները, որովհետեւ Քրիստոսի լոյս հաւատքը տարածեցին Հայաստանի մէջ, «իսկ քահանաներն ու հոգեւորականները Քրիստոսի առաքեալներու նոյն շառաւիղի նոր օղակներն են, որոնք կոչուած են նոյն առաքելութեան», շեշտեց ան:

Իր խօսքը ուղղելով նորած քահանային, Առաջնորդ Սրբազանը յորդո-

րեց զայն, որպէսզի հոգեկան ամրութեամբ Աստուծոյ խօսքերուն ու պատուիրաններուն սերմնացանը դառնայ, իր հաւատքին մէջ մնայ հաստատ ու Աստուծոյ հանդէպ ծառայութիւնը կատարէ սիրով ու հաւատարմութեամբ:

Ս. Պատարագի աւարտին, կնքհաւոր շարակցութեամբ տեղի ունեցաւ նորընծայ Քահանայ Հօր լուսացումի արարողութիւնը:

Ս. Պատարագէն ետք, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ, ի պատիւ Տ. Յակոբ Քահանայ Գեաղայեանին:



Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ 60-ԱՄԵԱԿ



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Սրտի անհուն ուրախութեամբ կ'ողջունեմ ձեզ՝ Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ 60-ամեակին առիթով:

60-ամեակ: Վաթսուն տարիներ առաջ, Մոնթրէալի գաղութը հաւաքական ճիգերով, անձնուրաց ու հաւատաւոր հայորդիներու օժանդակութեամբ կառուցեց իր հոգեւոր աղօթքի սեփական տունը:

Կը հաւատամ, որ 60-ամեայ տարեգարձը տօնն է իւրաքանչիւրիդ, անոր՝ որ իր կեանքը խառնած է եւ միացուցած է իր մասնակցութեամբ՝ եկեղեցւոյ ամբողջական կեանքին:

Ս. Յակոբ Եկեղեցին եղած է, եւ վստահ եմ պիտի շարունակէ ըլլալ հոգեւոր վերարթնութեան, մխիթարութեան եւ յուսադրման մնայուն աղբիւր՝ Մոնթրէալի մեր գաղութի զաւակներուն համար:

Եկեղեցին մեր ժողովուրդի զաւակներուն համար հոգեւոր տունն է, աղօթքի վայրն է, եւ իր քրիստոնէական հաւատքը դրսեւորող ու արտացոլացնող հայադրոջմ կառույցն է:

60-ամեակ: Այո՛, վաթսուն տարիներ շարունակ եկեղեցին եղած է այն կենդանի, ապրող, հոգեւոր շէնքը, ուր աղօթքն ու շարականը ղօղանջած են որպէս ապրեցնող ուժ, եւ ներթափանցած ամէն մէկ հաւատացեալի հոգիին մէջ:

Թող Աստուած օրհնէ բոլոր հաւատաւոր եւ անխնջ ծառայող հայորդիներու անթառամ յիշատակը, որոնք եկան, գործեցին ու անցան:

Թող Աստուած վարձահատույց ընէ բոլոր նախկին եւ այժմու երախտաւորներն ու սպասաւորները, ըլլան անոնք Առաջնորդ, հովիւ, բարերար, երեսփոխան, հոգաբարձու, սարկաւազ, դպիր, մէկ խօսքով՝ բոլոր անոնց, որոնք իրենց անձերէն վեր՝ եկեղեցւոյ կառուցման եւ պայծառացման գանձանակին մէջ իրենց լուծման դրին, եւ տակաւին կը շարունակեն դնել:

Պատմութիւնը վկայ, Հայ եկեղեցին դարերէ ի վեր եղած է ու կը մնայ պաշտպանը մեր ժողովուրդի արդար իրաւունքներուն, եւ ամրակուռ պարիսպը իր յարատեւ գոյատեւման:

Սրտանց կը շնորհաւորեմ ձեզ եւ կը մաղթեմ, որ համախմբուած մնաք եկեղեցւոյ շուրջ, եւ ձեր մասնակցութեամբ ու գորակցութեամբ ձեր կեանքը խառնէք հայ եկեղեցւոյ կեանքին, որ ինքնին կը նշանակէ մասնակցութիւն մեր ժողովուրդի ամբողջական կեանքին:

Թող Աստուած օրհնէ եւ գօրացնէ ձեզ:

Թող Աստուած՝ Երկնաւոր Թագաւորը անսասան պահէ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին:


Այս է միակ ճանապարհը մեր ժողովուրդի գոյատեւման ու յաւերժութեան:

Ձեր վարձքը կատար:

Օրհնութեամբ եւ սիրոյ ջերմ ողջունիւ,
Աղօթարար՝

ԲԱՏԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Գանատայի Հայոց Թեմի
Մոնթրէալ, 15 Դեկտեմբեր 2018



Եւ Վերստին Մարտահրաւերներ

Մեր եկեղեցւոյ սուրբին՝ Յակոբ Մծբնացիի վարքին ամենէն ուշագրաւ դրուագը, անոր լեռն ի վեր բարձրանալն է։ Ըստ հնագոյն ավանդութեան՝ Կորդուաց գաւառի Սարարազն ի վեր (Փաւստոս Բիւզանդ), ըստ վերջին ավանդութեան, Մեծ Մասիսն ի վեր (Աւետիս Ահարոնեան)։ Էականը այս տարբերութիւնը չէ, այլ «ճշմարտութեան գործերով զբաղ» դէմքին բարձրանալը լեռն ի վեր։

Ա՛յո, սուրբը լեռնէն վար իջած էր ետքը, բայց անոր հոգեւոր առաքելութեան մէջ մագլցումը չէր դադրած։ Արդէն առաքելութիւն մը միշտ այդպէս՝ ընթացում մըն է դէպի բարձունքը։ Ահարոնեան գրած է. «Վերելքը դժնդակ էր. ընկնում էր ու բարձրանում, քրտինքը ծորում էր ճակատից, կատաղի հովը գլուխն էր ծեծում (...) ժայռից ժայռ, դարից դար, տնքալով ու սաղմոս երգելով նա բարձրանում էր, հա՛ բարձրանում...»։ Ս. Յակոբի վերելքին այս նկարագրականը՝ անոր հոգեւոր ամենօրեայ փորձառութիւնն էր, վստահաբար։

60 տարիներ առաջ, երբ մեր համայնքը կը հիմնադրուէր, այս սուրբին անուամբ կոչուած էր եկեղեցին։ Ընտրութեան պատճառներուն մէջ գլխաւորը՝ ոգեղէն գիտակցութիւնն էր, թէ համայնքը իր լինելութեան համար կը գտնուէր յանձնառութեան մը առջեւ, որ մագլցում մը պիտի ըլլար լեռն ի վեր...

Յիրաւի, սկիզբէն տեսլաւոր, ամրակամ եւ յարատեւ ծրագրումի եւ իրագործումի առաքելութիւն մը եղաւ համայնքին ալ վերելքը, որ ծանր պատասխանատուութիւններու ստանձնում մըն էր։

Համայնքը այսօր կը գտնուի արդէն համարկումէ անդին՝ ձուլման հանգրուանին մէջ։ Ապացոյց։ Պսակներն ու Մկրտութիւնները, եւ նոր սերունդին անունները։ Ասիկա կ'արձանագրուի ոչ թէ իբրեւ ողբ, այլ պարզապէս՝ իբրեւ հաստատում։ Մինչ նախապէս արժեհամակարգը համայնքակեդրոն էր, ուստի նպաստաւոր համայնքային կեանքի կերտման, հիմա՝ արդէն ժամանակէ մը ի վեր՝ նայուածքը համայնքէն դուրս՝ այլ ուղղութիւններով բացուած է, ու յաճախ ալ՝ սեւեռուած։ Արդ, առաքելութեան նախկին մարտավարութիւնը լուրջ փոփոխութիւններու կը կարօտի։ Անշուշտ՝ առանցքին շուրջ այն ոգիին, որ ժագ Ս. Յակոբեանի մէկ քերթուածի հետեւալ տան մէջ գիրով մարմնաւորուած է.

«...Զի թէ եւ ըլլամ անշուք քու որդին,
Հաւատքի քար մը ե՛ս ալ կ'աւելցնեմ իմ կարգին
Քրիստոսահիմն խարխիւին վրայ, զոր դարբնե՛ր են պապերս,
Որ լոյսդ երբեք չթօշնի, սիւներդ յաւէտ չփշրին,
Մայրենի՛ իմ տուն, Հա՛յ եկեղեցի»։

Իւրաքանչիւր անդամի մօտ, ինչպէ՞ս զարգացնել որդիութեան եւ ինքնութեան գիտակցութիւնը, հաւատքի քար մը աւելցնելու պատրաստակամութիւնը, որպէսզի շարունակուի «ճշմարտութեան գործերով զբաղ» դժնդակ ելքը...

Հովիւ եւ Հոգաբարձութիւն





Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ կայքէջը՝
www.sourphagop.net

Վասն ծաղկեալ եւ բարագաւաճ պայծառութեան



Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ բարերարներու փաղանդին գլխուն են լուսահոգի Հրանդ, Երուանդ եւ Յակոբ Բաստրմաճեան եղբայրները։

Անոնք ծնած էին Կեսարիա, տան մէջ Բարսեղ եւ Արուսեակ Բաստրմաճեանի։ Տարագրութիւնը տարբեր հանգրուաններով գիրենք հասցուցած էր Գանատա։ Շնորհիւ Երուանդի է, որ երեք եղբայրներուն վերջին հանգրուանը Մոնթրէալն էր դարձած։ Այստեղ երեքով մէկ զբաղած էին գորգավաճառութեամբ՝ Yervant's Oriental Rugs հաստատութեան մէջ։

Երուանդ Բաստրմաճեան անդամ էր Canadian Armenian Congress–ին, որ հսկայական աշխատանք տարած էր բազում հայ անհատներու եւ ընտանիքներու Գանատա փոխադրութեան եւ հաստատման համար։

Երուանդ Բաստրմաճեան Ս. Յակոբի հիմնադիր գլխաւոր անդամն էր, քովն ի վեր աջակից Լեւոն Տէր Ասատուրեանի։ Ան իր եղբայրներուն հետ՝ Ս. Յակոբի համայնքին կազմաւորման մէջ կենսական դերակատարութիւն ունեցած էր։

Խորէն Ա. Կաթողիկոս Երուանդ Բաստրմաճեանի ուղղուած 22 Մայիս 1964 թուակիր Կոնդակին մէջ գրած է. «Ուրախացուիչ երեւոյթ է Մեզի համար վերակոչել մանաւանդ Ձեր բոլորանուէր զոհողութիւնները եւ բազում ծառայութիւնները, ինչպէս նաեւ Ձեր իրատես եւ անշահախնդիր ոգին, որոնց շնորհիւ Մոնթրէալի Մեր Պատուական Հայ Գաղութը հասած է իր այսօրուան պատուաբեր եւ նախանձելի դիրքին։ Արդարեւ, երկար տարիներէ ի վեր, Ձեր նիւթական ու բարոյական բոլոր ոյժերով սատար հանդիսացաք մեր մարտիրոսացեալ ժողովուրդի բեկորներուն եւ սիրայօժար նուիրուեցաք Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծաղկեալ եւ բարագաւաճ պայծառութեան»։

Երջանկայիշատակ Հայրապետին այս խօսքերը կատարելապէս կը ներդաշնակուին նաեւ Հրանդի եւ Յակոբի ոգիին։

Բաստրմաճեան եղբայրներուն կոչման պսակումը պիտի ըլլար 2002 թուականին Յակոբ Բաստրմաճեանի ձեռամբ՝ ի յիշատակ իր եղբայրներուն, եւ ի յիշատակ իր անուան՝ իշխանական նուիրատուութիւնը, որով կարելի եղաւ գնումը Ս. Յակոբ Ազգային Վարժարանի ներկայ շէնքին։ Եւ Հովիւն ու Հագաբարձութիւնը համայնքին երախտագիտութիւնը արտայայտելու համար՝ Վարժարանին երկրորդականը կոչեցին «Բաստրմաճեան» անուամբ։

Ս. Յակոբ Եկեղեցւոյ նախկին հովիւ, եւ այժմ հոգեւոր տեսուչ՝ Գերշ. Սուրէն Արք. Գաթարոյեան հետեւեալ վկայութիւնը տուած է. «Հրանդ, Երուանդ եւ Յակոբ Բաստրմաճեան ճշմարտապէս արժեւորեցին կեանքը, եւ կեանքի ճշմարիտ արժեւորման ճանապարհին վրայ՝ անոնց բարեսիրութիւնը առաւել եւ առաւել ամօքեցաւ, առաւել եւ առաւել պողպատեղեցաւ»։

Բաստրմաճեան եղբայրները հիմնադրամ հաստատած էին իրենց կենդանութեան, որ այսօր ալ կը գործէ, եւ հովանաւորն է 60–ամեակին։ Հիմնադրամին նպատակն էր եւ է սատարել կրթական եւ համայնքային ծրագիրներու, եւ ուսումնաթոշակով օգնել համալսարանականներու։

Անոնց յիշատակը կը քաջալերէ, որ համայնքը յարատեւ է իր դժուարին ելքին մէջ, եւ բանաստեղծին բառերով ըսելու թէ՝ մեմֆ կ երթամֆ դէպի աղբիւրը լոյսին...

60-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՏԱՍԿԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ 2008-2018

2008–ին, Ս. Յակոբ Առաջնորդա–նիստ Մայր Եկեղեցին տօնեց իր համայն–քային կեանքի հիմնադրութեան 50–ամ–եակը։ 1958–ին մէջ էր կայացած եկեղեց–ւոյ մեկնակէտային ժողովը։ Այն ատեն սկսած էր համայնքին առաջին հանգր–ուանը, որ երկարած էր մինչեւ 1973. այդ թրուականէն ետք մինչեւ այս օրը՝ երկ–րորդ հանգրուանն է։ Առաջին հանգր–ուանին, համայնքին կեդրոնն էր Սէնթ Զօթիքի մատուռ Ս. Յակոբ եկեղեցին եւ ներքնասրահ։ Այնտեղ համաքնակեալ գործեցին համայնքին հոգեւոր, կրթական, ազգային, բարեսիրական, մշակութային եւ մարզական կառոյցները։

Այժմեան Ս. Յակոբ Եկեղեցւոյ շէնքին եւ Հայ Կեդրոնի կեդրոնական մասին շինութիւնը իրականացած էր 1970–1973 տարիներուն, եւ համայնքա–յին նոր յարկին մէջ ընդհանրական յանձնառութիւնը վերաշխուժացած էր 1973–ի Ապրիլէն սկսեալ։

Երկրորդ հանգրուանին, նախկին իրագործումներուն վրայ գումարուած էին Հայ Կեդրոնին ընդարձակումը եւ վերանորոգումները, եկեղեցւոյ ներքին վերաշինութիւնը եւ վերանորոգումները, Ամենօրեայ Վարժարանին հաստատումը, անոր համար 3400 Nadon–ի շէնքին գնումը, Մանկամսուրին հիմնումը եւայլն։

Այսօր, Ս. Յակոբ Առաջնորդա–նիստ Մայր Եկեղեցին ընդարձակեալ պատասխանատուութիւն մը ստանձնած՝ կը տօնէ իր 60–ամեակը։

1.– ԿԱՌՈՅՑ ԵՒ ԸՆԹԱՍՔ։

Եկեղեցին կը վայելէ Հովանաւո–րութիւնը Գանատայի Հայոց Թեմին։ Անիկա ունի տրատու անդամներու ծա–ւալուն ցանկ մը եւ ծխական անդամներէ բաղկացած՝ առաւել քան 10, 000 ժողո–վուրդ։

Տրատու անդամներէն կ'ընտրուին հոգաբարձուներն ու երեսփոխանները։

1961–էն՝ Ս. Յակոբ Եկեղեցւոյ վարչական մարմինը «Հոգաբարձու–թիւն» կոչուած է, նախապէս անունն էր՝ «Գործադիր Մարմին»։ Նուիրեալներու ամբողջ գունդ մը որպէս հոգաբարձու՝ այդ թրուականէն ծառայած է այս հա–մայնքին, գործակցութեամբ հովիւներու, թէ՛ ժամանակաւոր, եւ թէ՛ լիաժամ, նաեւ՝ յանձնախումբերու։

Որպէս ժամանակաւոր հովիւ ծա–ռայածներէն՝ յատկապէս յիշատակելի են Հոգելոյս Արսէն Աւ. Քհնյ. Սիմէօնեանց եւ Հոգելոյս Տիգրան Աւ. Քհնյ. Խոյեան. Իսկ լիաժամներէն՝ Սուրէն Վրդ. Գաթա–րոյեան (1966–1973 — այժմ՝ Արքեպիս–կոպոս, եւ Հոգեւոր Տեսուչ եկեղեցւոյն), եւ «Քէպեգի ամենայն հայոց հովիւ»՝ Հոգելոյս Արմէն Ա. Քհնյ. Իշխանեան (1974–2001)։ 2001–էն Հովիւն է Արժ. Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Գոյունեան։

50–ամեակէն ասդին, Հոգաբար–ձութեանց կազմերուն որպէս ատենա–պետներ ծառայեցին Բաֆֆի Տօնապետ–եան (2008–2009), Մանուէլ Քէօսէեան (2009–2012) եւ Գէորգ Օհանեան (2012–2018)։ Այժմ ատենապետն է Գրիգոր Տէր Ղազարեան։

Հովիւին եւ Հոգաբարձական կազ–մերուն սատարեցին՝

— Եկեղեցւոյ յարկէն ներս. Բան–կալը, Տիկնանց օժանդակ յանձնախում–բը, Դպրաց դասն ու անոր յանձնա–խումբը, «Նոր Ծաղիկ»ի ծնողական յանձնախումբը, եւ Քրիստոնէական դաստիարակութեան յանձնախումբը։

— Հայ Կեդրոնի եւ Վարժարանի յարկէն ներս. միամեայ նշանակմամբ յանձնախումբեր՝ Կրթական Գործադիրը, Ս. Յակոբի Հիմնադրամը, Տնտեսականը, Կրթանպասարը, Էռեակ Ծնողականը։ Իսկ ժամանակաւոր ծրագիրներու համար՝ Տարեկան պարահանդէսի, Վարժարանին ի նպաստ տարեկան ճաշկերոյթի, Քերմէ–

սի յանձնախումբերը եւ այլք։

3.– ԾԻՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ։

Աշխարհագրական հեռաւորու–թիւնները, կլիմայական պայմանները եւ ընկերա–տնտեսական դրուածքը այս երկրին՝ ժողովումի չեն օգներ։ Այնու–հանդերձ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ ծխական կեանքը գեռ կը պահէ իր խտութիւնը, եւ ցարգ կը շարունակէ մնալ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի մշտահոծ սակաւաթիւ եկեղեցիներէն։

4.– ՔԱՐՈՋՁԱԿԱՆ։

I.– Ըստ աւանդութեան, ամէն Կի–րակի յընթացս Ս. Պատարագի քարոզ տրուեցաւ Հոգեւոր Տեսուչ՝ Գերշ. Սուրէն Արքեպիսկոպոսի եւ հովիււին կողմէ։ Առաջնորդ սրբազան հայրերու (Գերշ. Խաթակ Արք. Յակոբեան՝ ծառայութիւնը ստանձնած 2002–էն, եւ վարած մինչեւ 2014. Գերշ. Մեղրիկ Եպս. Բարիքեան՝ 2014–2016. Գերշ. Բաբգէն Արք. Ջար–եան՝ 2016–էն) պարբերական այցելու–թիւններուն ալ՝ պատգամներ անոնց կողմէ։ II.– Ամէն Կիրակի առաւօտ կա–նուխ՝ հովիւին հոգեւոր խորհրդածու–թիւնները սփռուեցան յունական MIKE—FM ռատիոկայանի Հայկական Յայտագրէն։ III.– Ամէն Մեծ Պահօց Չո–րեքշաբթիներու Հսկումի ժամերգու–թիւններուն՝ լսարանային կիսադասա–խօսկան խորհրդածութիւններ մատուց–ուեցան։ IV.– Դասախօսական երեկոնեը կազմակերպուեցան։ V.– Ս. Գրային սեր–տողութիւններ կատարուեցան։ VI.– Լուր աղօթքի ժողովումներ եղան։ VII.– Կայ–քէջի, գիմատետրի, թերթիկի միջոցով հո–գեւոր սնունդ մատակարարուեցաւ։ VIII.– Գիրքեր լոյս ընծայուեցան «Բան եւ Գիր» Մատենաշարով (ցարդ 10 հա–տորներ լոյս տեսած են), նաեւ՝ անջատա–բար։ IX.– Մեծ համերգներով (թէ՛ տեղա–կան երգչախումբերու եւ թէ՛ «Նոր Ծա–ղիկ»ի կատարմամբ)՝ Հայ եկեղեցւոյ, եւ անոր երաժշտական հարուստ աւանդին քարոզչութիւնը կատարուեցաւ։

5.– ԲԱՐԵՍԻԲԱԿԱՆ։

Յիսուս Լերան Քարոզին մէջ ըսած է. «Նրբ ողորմութիւն կ'ուզես տալ, փող ու թմբուկով մի՛ ըներ՝ մարդոց ուշադ–րութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ փռաւորուելու ակնկալութեամբ»։ Այս ոսկի պատուիրանը միշտ զգաստ կը պա–հէ նաեւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցին, որպէսզի փողով եւ թմբուկով չհփշտակէ իր բարեսիրական գործունէութիւնը, որ առաւելաբար մա–տակարարում մըն է հայորդիներու կրթութեան եւ ուսման։

6.– ԴՊՐԱՑ ԴԱՍ ԵՒ «ՆՈՐ ԾԱՂԻԿ»։

I.– Դպրաց դասի վաստակաւոր դպրապետն է Բրշ. Յակոբ Աւ. Սրկ. Գաս–պարեան։ Ժամերգութեանց երգեցողու–թիւններուն պատասխանատուն է նոյն–քան վաստակաւոր՝ Բրշ. Գրիգոր Աւ. Սրկ. Նուպարեան։

2008–ին, Դպրաց դասի խմբավարն էր Յասմիկ Ինճէճիկեան։ Ան իր պաշտօ–նը վարեց մինչեւ 2010։ Այդ թրուականէն մինչեւ այս օր՝ խմբավարն է Յասմիկ Գասպարեան։ Նախքան 2017–ը՝ երգե–հոնահարն էր Մարիէթ Նիլեան։ Անկէ ետք՝ Խաչատուր Ղազարեան։ Դպրաց դասը գրեթէ ամէն երկուշաբթի երեկոյ փորձ ըրաւ, որպէսզի հայ եկեղեցական երաժշտութիւնը ոգեւորէ թէ՛ հաւատաց–եալները, եւ թէ՛ ներկաները։

II.– «Նոր Ծաղիկ»ի ծլած օրէն՝ խմբավարը եւ գեղարուեստական ղեկա–վարն է էլիզապէթ Պողոսին–Հարպոյ–

եան։ 2008–2009՝ դաշնակահար–երգե–հոնահարն էր Մարիա Անտոնեան։ Այդ թրուականէն մինչեւ այսօր՝ Դայար Հար–պոյեան– Գալլօղլեան։ «Նոր Ծաղիկ»ի փորձերը կատարուեցան Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, ամէն Ուրբաթ երեկոյ, ժամը 4.00–6.00։ «Նոր Ծաղիկ»ը ցարդ հոծ բազմութեամբ ունկնդիրներու դիմաց բեմ բարձրացած է եւ տուած 12 ներշնչիչ համերգներ, նաեւ տօնական առիթներու Ս. Պատա–րագ երգած է, միշտ վերացնելով։

«Նոր Ծաղիկ»ի ճամբով հայ փոք–րիկն ու պատանին կը կրթուին ունեւնա–լու յատուկ սէր եւ որակաւոր ճաշակ հայ երգին եւ երաժշտութեան նկատմամբ։

7.– ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՀԱՅ ԿԵԴ–ՐՈՆԻ ԵՒ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՇԷՆՔԵ–ՐՈՒՆ ՀՈՎԱՐՃԱԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՆՁԱՆՁՈՒՄ։

Վերջին տասնամեակին, եկեղեցւոյ, Հայ Կեդրոնի եւ Ամենօրեայ Վարժարա–նի շէնքին մէջ հսկայ նորոգութիւններ եւ վերանորոգութիւններ կատարուեցան. I.– Եկեղեցւոյ աջակողմեան դասին մէջ նոր Մկրտարան մը շինուեցաւ՝ բարերա–րութեամբ Միրաքեան ընտանիքին (2011–2012), II.– Մանկամսուրը ընդ–լայնուեցաւ՝ բարերարութեամբ Տ. եւ Տ. Արամ եւ Պերճուհի Մարգարեանի (2011–2012). III.– Վարժարանիս տարրալուծա–րանը նորոգուեցաւ եւ անուանուեցաւ «Մանուկ Չուխաճեան» Տարրալուծա–րան»՝ բարերարութեամբ Չուխաճեան ընտանիքի հիմնադրամին (2012–2013). IV.– Բաստրմաճեան սրահին մէջ հիմ–նական նորոգութիւններ իրականացան եւ սարքերը արդիականացան՝ բարերա–րութեամբ Բաստրմաճեան հիմնադրամին (2012–2013). V.– «Հաճէթեան մար–գասրահ»ը վերանորոգուեցաւ՝ բարերա–րութեամբ Հաճէթեան ընտանիքին (2013–2014). VI.– Վարժարանի դար–պանները փոխուեցան՝ բարերարութեամբ Բաստրմաճեան հիմնադրամին (2014–2015). VII.– Հայ Կեդրոնի ճաշասրահը նորոգուեցաւ եւ անուանուեցաւ Հայ Կեդրոնի «Արթօ եւ Ալիս Մարգարեան Ճաշասրահ»՝ բարերար ամուլին անունով (2014–2015). VIII.– Եկեղեցւոյ գմբէթը եւ գաւիթը նորոգուեցաւ բարերարու–թեամբ Տիկ. Անայիս Շիրինեանի (2015–2016). IX.– Եկեղեցւոյ վերնատունը շինուեցաւ բարերարութեամբ Տիկ. Պեր–թա Մինասեան–Հէյլըրի (2015–2016). X.– Եկեղեցւոյ Խորանին վրայ գեղեցիկազարդ լուսամուտ գետեղուեցաւ բարերարու–թեամբ Տ. եւ Տ. Յարութիւն եւ Սոնիա Մարութեանի (2014–2015). XI.– «ՀՄԸՄ–Կամք մարգասրահ»ը նորոգ–ուեցաւ բարերարութեամբ Տիկ. Անահիտ Մարգարեանի, եւ ի յիշատակ բարերա–րուհիի ամուսնոյն՝ վերանուանուեցաւ «ՀՄԸՄ–Կամք/Հայկ Մարգարեան մար–գասրահ» (2015–2016). XII.– Վարժարա–նի շէնքին մէջ վերանորոգումներ կա–տարուեցան բարերարութեամբ Տ. եւ Տ. Կարօ եւ Անի Տոնոյեանի (2016–2017). եւ XIII. «Գալֆայեան Մարգական Կեդրոն»ը շինուեցաւ լու–սահոգի բարերար՝ Յակոբ Գալֆայեանի կտակին շնորհիւ (2016–2017)։

8.– ԿՐԹԱ–ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ս. Յակոբի Շաբաթօրեայ Վարժարա–նի 50–ամեակին եւ Ս. Յակոբ Ազգային Վարժարանի 35–ամեակին առիթով, Մեծ Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ Արամ Ա. Կաթողիկոսը 22 Ապրիլ 2009 թրուակիր Կոնդակով հետեւեալն էր ըսած.

«Հայ դպրոցը մեզի համար սոսկ կրթական հաստատութիւն մը չէ, լուի գի–տութիւն եւ ուսում ջամբող վայր մը չէ, Հայ եկեղեցւոյ կողքին՝ հայ մարդու կազ–մաւորման նուիրական նպատակին լծուած

սրբավայր մըն է հայ դպրոցը։ Սրբավայր մը՝ ուր մեր պատմութեան սուրբերն ու նահատակները, մեր հոգիի ու մտքի հսկա–ները, մեր հաւատքի ու հայրենիքի հերոս–ները կեանք կ'առնեն ու կեանք կու տան մեր նոր սերունդներուն»։

Այս ոգիով է, որ Ս. Յակոբի հա–մայնքը զարկ տուած է իր կրթա–ու–սումնական կեանքին, սկիզբէն։ Ըստ հաստատման թրուկաններու կարգին՝ անոնք են.

I.– Շաբաթօրեայ Վարժարան։

Ասիկա՝ համայնքին առաջին կրթական հաստատութիւնն է։ Սկիզբը վայրն էր Սէնթ Զօթիքի յարկը։ Ապա վարժարանէ վարժարան անցնելով՝ 1987–1988 տարեշրջանէն սկսեալ տեղաւոր–ուած Malcolm Campbell High School–ի շէնքին մէջ, որ Ամենօրեայի ներկայ հասցէն է — 3400 Nadon։ Տնօրէնի պաշտօնով ծառայած են՝ Սեդրակ Բարա–ղամեան, Վիթթորիա Յովսէփեան, Սոնա Տէր Սարգիսեան, Անահիտ Մարգարեան, Յակոբ Սիմոնեան, Լորիս Մալոյեան, Նազարէթ Սէֆէրեան, Յասմիկ Տէր Պետ–րոսեան, Վահէ Երէցեան, Յակոբ Տէր Խաչատուրեան, Վարդի Դանիէլեան։ 1995–2010, այսինքն՝ ներառեալ 50–ամեակին յաջորդ երկու տարին՝ տնօրէնն էր Հայկ Գազանճեան։ Անկէ ետք՝ մին–չեւ 60–ամեակ՝ Շաբաթօրեային տնօրէ–նութիւնը վարեցին Մարիամ Խաչա–տուրեան, Ջարմինէ Թաշճեան, Գրիգոր Մարունեան, Սալբի Լատոյեան, Բրշ. Իվան Սրկ. Գիադայեան։ Այժմ տնօրէնն է Քրիստափոր Միքայէեան։

Աշակերտութեան թիւը՝ 2008–2009–ին 48, 2009–2010–ին՝ 49, 2010–2011–ին՝ 49, 2011–2012–ին՝ 57, 2012–2013–ին՝ 48, 2013–2014–ին՝ 55, 2014–2015–ին՝ 47, 2015–2016–ին՝ 52, 2016–2017–ին՝ 50, 2017–2018–ին՝ 40։

2014–2015 տարեշրջանէն ասդին,

կրթօճախը վայելեց բարերարութիւնը Տ. եւ Տիկ. Դրօ Փիլիկեանի, եւ վերանուան–ուեցաւ «Դրօ եւ Աննա Փիլիկեան Շա–բաթօրեայ Վարժարան»։

Շաբաթօրեայ Վարժարանը օճախ է հայեցի կրթութեան, ու հայ մանուկնե–րուն եւ պատանիներուն հայ արժէքնե–րով դաստիարակութեան։

Արդարեւ, անիկա կը կարօտի լուրջ վերակազմակերպումի եւ վերածրագրա–ւորման։

II.– Արարատ ամառնային Ճամբար։

1971–ը առաջին տարին է Արարատ Ճամբարին։ Սկզբնական վայրը Շոմէտիի St–Norbert Վարժարանին շէնքն էր։ Ետ–քը Մոնթրէլայեան վարժարաններ պիտի վարձէր։ Ամենէն աւելի պիտի օգտա–գործուէր Սէն Լորանի Cedarcrest Վար–ժարանին շէնքը։ 1988–էն ցայսօր՝ 3400 Nadon–ի մեր յարկին մէջ է։

Առաջին օրէն, Ճամբարին նպա–տակն էր հայ տղաներն ու աղջիկները ի մի խմբել, որպէսզի միասին խաղան, զուարճանան, պտըտին, հայերէն խօսին եւ երգեն եւ սորվին սիրել հայ միջավայ–րը։

2008–2018՝ 7 շաբաթներուն վրայ տարածուեցան համախմբումները։ 2008–ին եւ 2009–ին տնօրէնուհին էր Ջարմի–նէ Թաշճեան։ 2010–ին, 2011–ին եւ 2012–ին՝ Նէնաի Իսա–Թորոսեան։ 2013–ին՝ Մարի Յովհաննէսեան։ 2014–ին՝ Լո–րի Ապրաքեան, 2015–ին, 2016–ին, 2017–ին՝ Ալիբ Պուլկարեան։ 2018–ին՝ Կասիա Լախոյեան։

Աշակերտներու շաբաթական ներ–կայութեան միջին թիւը. 2008–ին՝ 85. 2009–ին՝ 84. 2010–ին՝ 78. 2011–ին՝ 75. 2012–ին՝ 63. 2013–ին՝ 68. 2014–ին՝ 72. 2015–ին՝ 99. 2016–ին՝ 114. 2017–ին՝ 122. եւ 2018–ին՝ 123։

Արարատ ճամբարը քանակային իր անձան քովն ի վեր՝ յաջողութեամբ շաքուենակեց դաստիարակչական իր առաջադրութիւնը միախառնել խաղին, զուարճանքին եւ պտոյտին։

III.– ՀՕՄի Ծաղկոց։

1973–ը առաջին տարին է ՀՕՄի Ծաղկոցին։ Անիկա նախ ծաղկած է Հայ Կեդրոնի ներքնայարկին մէջ, ապա՝ յարակից անջատ շէնքին մէջ։ Տնօրէնուհիի պաշտօնով ծառայած են՝ Վանուհի Իսաջանեան, Անի Մելիքեան, Նազան Արթինեան։ 2000–էն ասդին տնօրէնուհին է Սիլվա Քէօշքերեան։

Բոլոր տարիներուն աշակերտութեան թիւը 160 է։

Ծաղկոցը գլխաւոր երկու ծրագիր ունեցած է.

Ա.– Սեփականը՝ որ Հայերէն լեզուի, Հայ մշակոյթի ու ավանդութիւններու եւ տօներու ոգիին ջամբման կը վերաբերի։

Բ.– Ընտանիքի Նախարարութեան «Accueillir La Petite Enfance» ծրագիրը, որուն նպատակն է երախան պատրաստել՝ որ ան ինքն իր տէրը ըլլայ, ինք ընտրէ իր խաղը, եւ մշակէ իր փորձառութիւնը։

Տնօրէնուհին՝ Սիլվա Քէօշքերեան ամավերջի հանդիսութեան մը ըսած է. «ՀՕՄի Ծաղկոցը եղաւ մեր երախաներուն երկրորդ տունը։ Անոնք հոն գտան տաքուկ եւ ապահով մթնոլորտ։ Դաստիարակները տուին անոնց գուրգուրանք, հետեւեցան անոնց քայլ առ քայլ, հետաքրքրական եւ հարուստ միջավայր ստեղծեցին, խաղեր եւ աշխատանքներ հրամցուցին, որպէսզի անոնց փորձառութիւնը աճի, նոր գիտելիքներով ճոխանան եւ իրենց կարողութիւններն ու ձիրքերը զարգացնեն»։

Տնօրէնութիւնը կազմակերպած է շատ օգտակար դաստիարակչական դասախօսութիւններ, թէ՛ դաստիարակներու վերա–որակաւորման համար, եւ թէ՛ ծնողներու գիտութեան ընդարձակումին համար։

IV.– Ամենօրեայ Վարժարան։

1974–1975–էն կը գործէ Ս. Յակոբի Նախակրթարանը։ Անոր առաջին տարեշրջանը անցած է Holy Lady of Pompei Վարժարանի շէնքին մէջ։ 1976–1987՝ Louis Pasteur Վարժարանի շէնքին մէջ։ Եւ 1987–1988 տարեշրջանէն՝ 3400 Nadon–ի մէջ։ Վանուհի Իսաջանեանի տնօրէնութեամբ ճանապարհ ելած կրթարանը, որ յաջորդ տնօրէնին՝ Ադաւնի Էլոյեանի օրով բարձրացած էր մինչեւ երկրորդական 11–րդ։ Երրորդ տնօրէնն

էր Յակոբ Պուլկարեան, որուն ծառայութեան վերջընթեր տարիին պիտի զուգադիպէր համայնքին 50–ամեակը։ 2010–էն ցայսօր տնօրէնութեան պաշտօնը ստանձնեցին Վիգէն Թիւֆէնքճեան (տարի մը), ապա՝ Լենա Գատեան։ 2018–2019 տարեշրջանին տնօրէնն է Լորի Ապրազեան։

1993–ին, Նախակրթարանը կոչուած էր բարերար Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեանի անուամբ. եւ 2002–ին ալ՝ երկրորդականը կոչուած էր «Բաստրմաճեան»՝ ի յիշատակ համայնքին հիմնադիր եւ բարերար Հրանդ, Երուան եւ Յակոբ Բաստրմաճեան եղբայրներուն։

Աշակերտութեան թիւը. 2008–2009–ին՝ 671, 2009–2010–ին՝ 677, 2010–2011–ին՝ 663, 2011–2012–ին՝ 669, 2012–2013–ին՝ 664, 2013–2014–ին՝ 673, 2014–2015–ին՝ 718, 2015–2016–ին՝ 826, 2016–2017–ին՝ 837, 2017–2018–ին՝ 783։

2014–2017 աշակերտութեան թիւին արագ բարձրացումը հետեւանքն էր Սուրիոյ տագնապին պատճառով սուրիահայ գաղթականութեան, եւ ուստի՝ Ընդունման դասարաններու ստեղծումին։

Ըստ Fraser հաստատութեան վիճակացոյցին, վարժարանին 10–ի վրայ գնահատանիչերն են. 2008–2009–ին՝ 8.7, 2009–2010–ին՝ 8.4, 2010–2011–ին՝ 9.1, 2011–2012–ին՝ 7.7, 2012–2013–ին՝ 7.2, 2013–2014–ին՝ 7.0, 2014–2015–ին՝ 5.8, 2015–2016–ին՝ 7.5, 2016–2017–ին՝ 6.5, իսկ անցեալ տարեշրջանի նիշը պիտի հրապարակուի յառաջիկայ տարի։

Նախկին վաստակաւոր տնօրէնը՝ Յակոբ Պուլկարեան վարժարանի առաքելութեան կապալաքաբար այս խօսքը գրած էր. «Մենք նոր մարտահրաւէրներու առջեւ ենք. մեր նոր սերունդը պատրաստել ոչ թէ միայն հասնելու նոր Հայաստանին, այլ նաեւ Քէպեդին եւ Գանատային. ըլլալու պատասխանատու քաղաքացիներ, եւ օգտակար իրենց ծնողները եւ մեծ ծնողները ընդունած երկրին։ Կրկնակ պատասխանատուութիւն կայ ուսերուն վրայ գանատահայ եւ քէպեզահայ այս նոր սերունդին»։

Այս անդրադարձը հրաւէր մըն է կրթական եւ ուսումնական վերականգնումի, որ կը ծառայէ մրցունակութեան եւ իրատես յառաջընթացի։

V.– Կիրակնօրեայ դպրոց։

1980–էն սկսած Ս. Յակոբի Կիրակնօրեայ Դպրոցը, 1997–էն իրեն տնօրէնունի Բրշ. Թորոս Սրկ. Պապիկեանը։ Նախապէս, այդ ծառայութիւնը յանձն

առած էին Այտա Պաղջճեան, Յարութիւն Փալանճեան, Զաւէն եւ Վալանթին Ապտալեան։ Դպրոցը նախապէս Հայ Կեդրոնին մէջն էր՝ մինչեւ 1994–1995 տարեշրջան։ Անկէ ետք՝ Ամենօրեայ Վարժարանի շէնքին մէջ։

Կիրակնօրեայ դպրոցը քրիստոնէական–հայեցի կրթութիւն ջամբած է։ 2008–էն՝ անիկա իր ծառայութիւնը շաքուենակած է բերել Աստուծոյ փառքին եւ մատղաշ սերունդի հոգեւոր պայծառացման համար։

Աշակերտութեան միջին ներկայութիւնը. 2008–2009–ին՝ 23, 2009–2010–ին՝ 29. 2010–2011–ին՝ 26, 2011–2012–ին՝ 30, 2012–2013–ին՝ 33, 2013–2014–ին՝ 38, 2014–2015–ին՝ 40, 2015–2016–ին՝ 36, 2016–2017–ին՝ 39, 2017–2018–ին՝ 32, իսկ ցարդ՝ 33։

Դպրոցը ունի Մանկապարտէզի, Նախակրթարանի եւ երկրորդականի բաժիններ։ Կը հրատարակէ զանդուածային ընթերցումի արժանացած պարբերական մը՝ «Մաշտոցի արձագանգ» անուամբ։ Անոր հարուստ կայքէջն ալ բազում այցելութիւններու հասցէ է։

Տնօրէնը՝ Թորոս Սրկ. Պապիկեան Կիրակնօրեայ Դպրոցի նպատակին համար գրած է. «...մեր մանուկները այնպէ՛ս պէտք է դաստիարակել որ անոնք ա.– Հայերէն Աստուածաշունչ բանան եւ կարդան. Բ.– Սորվին ինչ հանել, եւ գիտնան ապրիլ ըստ այդ նշանի իմաստին. Գ.– Սորվին Աղօթիւ. Գ.– Գիտնան Հայ եկեղեցւոյ ավանդութիւններու եւ տօներու մասին. Ե.– Գիտնան ընդհանրապէս սուրբերու մասին, եւ մանաւանդ՝ հայ սուրբերուն մասին. Զ.– Սորվին Հայ եկեղեցւոյ պատմութիւնը. Է.– Գիտնան, թէ իրենք մաս կը կազմեն դարաւոր ինքնութեան մը, որովհետեւ Հայ եկեղեցւոյ վերանորոգումը կը սկսի իր մանուկներուն քրիստոնէաշունչ հայեցի դաստիարակութեամբ»։

VI.– Արամ եւ Պերճուհի Մարգարեան Մանկամուր։

Մանկամուրը բացուեցաւ 2007–ին եւ կոչուեցաւ բարերար զոյգին անունով։ Մանկամուրին տեղը Ամենօրեայ Վարժարանի շէնքին մէջն է, յատուկ տարածք մը։

Սիկրքէն տնօրէնուհին է Լիզա Մաղլումեան։

2008–2011 տարեշրջաններուն՝ մանուկներուն թիւը 43 էր։ 2011–2012–ին, նոյն բարերար ամուլին նուիրատուութեամբ երբ ընդարձակուեցաւ մանկամուրը՝ կարելի եղաւ ընդունիլ առաւել թիւով երախաներ։ Մանկամուրը իրա–

ւունքն ունի ընդունելու 80 երախայ։

Հետեւած է Ընտանիքի Նախարարութեան թելադրած բոլոր օրէնքներուն եւ կանոններուն, որպէսզի մանուկները հանգիստ, ապահով եւ առողջ ըլլան։ Նաեւ ի գործ դրած է նոյն Նախարարութեան «Accueillir la petite enfance» ծրագիրը։ Երախաներուն խօսակցութիւնը քաջալերելու համար՝ մանկամուրին պաշտօնէութիւնը հայերէն եւ ֆրանսերէն լեզուով դաստիարակչական ծրագիր պտորաստած է։

Տնօրէնութիւնը դաստիարակներու վերա–որակաւորման դասընթացքներ կազմակերպած է։

Տնօրէնուհին հանդիսութեան մը առիթով Մանկամուրի պաշտօնին համար ըսած է. «Երբ մայրեր աշխատանքի կ'երթան, վստահելի մանկամուրի մը գոյութիւնը առաջնահերթ պայման է։ Իւրաքանչիւր ծնողքի փափաքն է իր զաւակին կրթութիւնը յանձնել վստահելի եւ բժախնդրի հոգատարութեան, մանաւանդ երբ երախան տակաւին նորափթիթ բողբոջ մըն է ու իր զգայարանքներուն կազմութիւնը սկզբնական հանգրուանի մէջ է։ Կասկածէ վեր է նաեւ, որ իւրաքանչիւր ծնողքի փափաքն է իր զաւակին առօրեայ ուրախութիւնը ապահովել։ Մեր մանկամասուրը այս նկատառման եւ փափաքներուն իտէալական տեղ մըն է»։

9.– Լեոն Ի ՎեՐ...

